*Հավելված N 1*
*ԵԱ-ՀՄԱԾՁԲ-24/52 ծածկագրով գնման*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովի*
*2024թ-ի դեկտեմբերի 5-ի N2 արձանագրության*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերի պարզաբանման մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2024 թվականի դեկտեմբերի 5-ի N2 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

**Ընթացակարգի ծածկագիրը՝ ԵԱ-ՀՄԱԾՁԲ-24/52**

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ՀՄԱԾՁԲ-24/52 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2024 թվականի դեկտեմբերի 5-ի ժամը 09:35-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2024 թվականի դեկտեմբերի 5-ին տրամադրված պարզաբանումները՝

**Հարցադրում N1:** «Հարգելի համակարգող,

Առաջնորդվելով ստացված ԵԱ-ՀՄԱԾՁԲ-24/52 ծածկագրով մրցույթի տեխնիկական բնութագրում՝ մասնավորապես ձեռքբերվող ծառայության ընդհանուր նկարագրի 2-րդ մասում ներկայացված պահանջի, խնդրում ենք պարզաբանելնշված կետի պահանջը. արդյո՞ք գիշերային ստուգում-այցերը պետք է իրականացվեն արդեն իսկ նշված 5 հասցեների պահակակետերի անվտանգության աշխատակիցներից որևէ մեկի կողմից /այդ թվում տեղակալներից որևէ մեկի/, թե նշված ծառայության համար ընդգրկվում է լրացուցիչ անվտանգության աշխատակից:

Շնորհակալություն»:

**Պարզաբանում N1:** «Հարգելի մասնակից

Ի պատասխան Ձեր հարցմանը հայտնում ենք, որ 2-րդ կետի հետ կապված լրացուցիչ աշխատակից չի պահանջվում, ծառայությունը պետք է իրականացվի գիշերային հերթափոխում ներգրավված 3 պահնորդների միջոցով, որոնցից մեկի վրա կդրվի հերթափոխի պետի պարտականությունը, որոնց աշխատանքների կազմակերպման համար պարտադիր չէ տրանսպորտային միջոց և ծառայությունը կատարվում է իրենց կցված հասցեում:»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ԵԱ-ՀՄԱԾՁԲ-24/52 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանին:

Հեռախոս՝ (+374) 98 389689 (ներքին հեռախոսահամար՝ 10)
Էլ. փոստ՝ m.simonyan@promotion.am
Պատվիրատու՝ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ